ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

1967 թվականին «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց «Էսթետիկայի հարցեր» անդրանիկ ժողովածուն, որը լավ ընդունելություն գտավ ընթերցողի կողմից:

«Էսթետիկայի հարցեր» երկրորդ ժողովածուն նույնպես նախապատրաստել է Հայկական ՍՍՀ ԳԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը:

ՍՄԿԿ XXIV համագումարում հատուկ ուշադրություն դարձվեց գաղափարական աշխատանքի մի շարք բնագավառներին, որոնց թվում նաև էսթետիկական դաստիարակությանը:

Մեր կյանքի կարգացման ժամանակակից էտապում հրամայական է դառնում ինչպես մարքս-լենինյան էսթետիկայի խնդիրների համակողմանի մշակումը գիտական բարձր մակարդակով, այնպես էլ գիտության ու պրակտիկայի փոխադարձ կապի ամրապնդումը:

Ներկա ժողովածուն մի համեստ փորձ է այդ պահանջների իրականացման ուղղությամբ:

Գրքում զետեղված նյութերն իրենց բովանդակությամբ բաժանվում են երեք խմբի՝ 1) լենինյան ժառանգությունը և էսթետիկայի հարցերը, 2) ժամանակակից էսթետիկայի խնդիրները և 3) հայ էսթետիկական մտքի պատմությունը: Այս հատորում բավականին տեղ է հատկացված էսթետիկայի մի շարք նորագույն հարցերի լուսաբանմանը, որոնք գտնվում են գիտական ակտիվ մշակման վիճակում: Դրանով է պայմանավորված այն, որ տպագրվող աշխատություններում գաղափարա-մեթոդաբանական միասնության պայմաններում երբեմն պարունակվում են բանավեճային դրույթներ, որոնք թերևս անխուսափելի են նոր, հրատապ խնդիրների գիտական հետազոտման ժամանակ: Ան-

հրաժեշտ է նշել, որ ժողովածուի խմբագիրները ոչ միշտ են բաժանում հոդվածներում առաջադրվող և զարգացվող որոշ տեսակետներ և, այնուամենայնիվ, գտնում են, որ այսօրվա գիտության համար վիճելի նման տեսակետներին ծանոթանալը օգտակար կարող է լինել ընթերցողի համար:

Ինչպես նախորդ գրքում, ներկա ժողովածուին ևս մասնակցում են, բացի Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի աշխատակիցներից, այլ գիտական հիմնարկություններում և ուսումնական հաստատություններում աշխատող հեղինակներ, որոնցից երեքը (Հ. Ջ. Ապրեսյանը, Ա. Ա. Օգանովը և Կ. Մ. Դոլգովը)՝ Մոսկվայից: